


# *Տեղեկատու թիվ 02/26*
# *Newsletter N 02/26*
# *մայիս 2026թ.*

---

## Հայ դատի կենտրոնական գրասենյակ




### ՀՅԴ Հայ դատի կենտրոնական խորհրդի հայտարարությունը՝ Ստեփանակերտի մայր տաճարի ավերման առթիվ

ՀՅԴ Հայ դատի կենտրոնական խորհուրդը խստորեն դատապարտում է Ադրբեջանի իշխանությունների կողմից օկուպացված Ստեփանակերտում Սուրբ Աստվածածին մայր տաճարի ոչնչացումը: Այս գործողությունը, որը տեղի է ունենում Հայոց ցեղասպանության 111-րդ տարելիցի նախօրեին, նշանավորում է Արցախում հայկական մշակութային և հոգևոր ժառանգության համակարգված վերացման լուրջ սրացում:
Օծված 2019 թվականին՝ տաճարը խորհրդանշում էր հայկական կրոնական կյանքի վերածնունդը և տեղի հայկական ներկայության շարունակականությունը: Դրա ոչնչացումը՝ հաստատված արբանյակային պատկերներով, հետևում է հայկական մշակութային և կրոնական վայրերի նկատմամբ նախորդ հարձակումներին և արտացոլում է ավելի ընդգրկուն և կանխամտածված գործողություններ՝ վերացնելու հայկական պատմական հետքը:

Text Link

## Statement by ANC–International Destruction of the Holy Mother of God Cathedral in Stepanakert




ANC–International strongly condemns the destruction of the Holy Mother of God Cathedral (Surb Astvatsatsin) in occupied Stepanakert by Azerbaijani authorities. Occurring on the eve of the 111th anniversary of the Armenian Genocide, this act marks a serious escalation in the systematic erasure of Armenian cultural and spiritual heritage in Artsakh.
Consecrated in 2019, the cathedral symbolized the revival of Armenian religious life and the continuity of indigenous Armenian presence. Its destruction—confirmed by satellite imagery—follows earlier attacks on Armenian cultural and religious sites and reflects a broader, deliberate effort to eliminate the Armenian historical footprint. These actions constitute serious violations of international law and UNESCO instruments protecting cultural heritage, and they contravene binding orders of the International Court of Justice requiring Azerbaijan to prevent and punish such acts.

Text Link



## ՀՅԴ Հայ դատի կենտրոնական խորհրդի հայտարարությունը Հայոց ցեղասպանության 111-րդ տարելիցի առթիվ

Հայոց ցեղասպանության զոհերի ոգեկոչման 111-րդ տարելիցն է։ Թվում է թե տարեթվերը մեզ հեռացնում են մարդկության դեմ իրագործված այդ զազրելի հանցագործության հետևանքներից, սակայն մեր պատմության վերջին զարգացումները՝ Արցախի բռնգրավումը եւ հայաթափումը ավելորդ անգամ ևս փաստում են, որ Հայոց ցեղասպանությունը ոչ թե ժամանակի և տարածության մեջ իրականացված և ավարտված ոճիր էր, այլ շարունակական հանցագործություն, որ միտված է բնաջնջելու կամ տեղահանելու հայությանն իր հայրենիքից։
Ցեղասպանությունը շարունակում է լինել հանցագործություն և կենսական վտանգ այնքան ժամանակ քանի դեռ ցեղասպան կողմը չի ընդունել իր քաղաքական ու բարոյական պատասխանատվությունը, իսկ միջազգային հանրությունը՝ չի պարտադրել դա։ Ցեղասպանության ընդունումը հավասարապես անհրաժեշտ է ինչպես ցեղասպանին՝ մաքրվելու պատմական խարանից ու դադարելու հանդիսանալ քաղաքակրթական վտանգ,

այնպես էլ ցեղասպանվածին՝ իբրև երաշխիք ցեղասպանական մտադրությունների դադարեցման։

Text Link

## Statement of the Armenian National Committee – International on the 111th Anniversary of the Armenian Genocide



The 111th anniversary commemoration of the victims of the Armenian Genocide is upon us. While the passage of time may appear to distance us from the consequences of that abhorrent crime against humanity, recent developments in our history—namely, the occupation and the ethnic cleansing of Artsakh—once again demonstrate that the Armenian Genocide was not a crime confined to a specific time and place, but an ongoing process aimed at the extermination or displacement of the Armenian people from their homeland.

Genocide remains both a crime and an existential threat so long as the perpetrating state has neither acknowledged its political and moral responsibility nor been compelled to do so by the international community. Recognition of genocide is equally necessary for the perpetrator—to cleanse itself of a historical stigma and cease to pose a civilizational threat—and for the victim, as a guarantee against the continuation of genocidal intent.

Text Link

# Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ




## Over 45 U.S. Representatives Co-Sign ANCA-Backed Armenian Caucus Letter Advancing Pro-Armenian Foreign Aid Priorities

The Armenian National Committee of America (ANCA) is welcoming a Congressional Armenian Caucus letter — backed by over 45 Members of the House of Representatives — urging the House Appropriations Subcommittee on National Security, Department of State, and Related Programs (NSRP) to include critical pro-Armenia/Artsakh provisions in the FY27 NSRP Appropriations Bill.

The letter, addressed to Subcommittee Chairman Mario Diaz-Balart (R-FL) and Ranking Member Lois Frankel (D-FL), calls for expanded U.S.-Armenia security cooperation, $100 million in humanitarian assistance for Armenians forcibly displaced from Artsakh, a prohibition on U.S. military aid to Azerbaijan, Global Magnitsky Act sanctions accountability measures, and meaningful Congressional oversight of the Trump Route for International Peace and Prosperity (TRIPP) framework.

“Over forty-five members of Congress have put their names behind a clear, principled message: the United States must stand with Armenia, hold Azerbaijan accountable, and

deliver justice for the Armenians of Artsakh," stated Aram Hamparian, ANCA Executive Director. "This letter — secured through the hard work of Armenian Americans mobilizing across the country — gives the Appropriations Subcommittee a bipartisan mandate to act. The FY27 appropriations process is one of the most powerful tools Congress has, and this Caucus letter puts that power to work for our Armenian American priorities."

Text Link




## ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի ավելի քան 45 անդամներ հանդես են եկել Հայաստանին տրամադրվող աջակցության ավելացման օգտին

Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի սատարումը վայելող ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի երկկուսակցական նամակը Հատկացումների ենթահանձնաժողովին կոչ է անում տրամադրել անվտանգային օգնություն Հայաստանին, մարդասիրական աջակցություն Արցախի փախստականներին, ապահովել Ադրբեջանի պատասխանատվությունը և վերահսկողություն սահմանել TRIPP նախաձեռնության իրականացման նկատմամբ:
Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը ողջունում է Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի նամակը, որը ստորագրել են Ներկայացուցիչների պալատի ավելի քան 45 անդամներ՝ կոչ անելով Ներկայացուցիչների պալատի Ազգային անվտանգության, Պետքարտուղարության և հարակից ծրագրերի Հատկացումների ենթահանձնաժողովին՝ (NSRP) 2027 ֆինանսական տարվա NSRP հատկացումների օրենքում ներառել Հայաստանին և Արցախին առնչվող կարևոր դրույթներ:

Text Link



## Bipartisan Congressional Gathering Demands Justice for Century of Genocide at Capitol Hill Commemoration

A bipartisan gathering of Congressional leaders joined Armenian Americans and allies from across the country on April 15th for the annual Capitol Hill commemoration of the Armenian Genocide, issuing unified calls for the immediate release of Armenian hostages, the right of return for Artsakh Armenians, and sanctions against the Aliyev and Erdogan regimes for genocidal crimes spanning from 1915 to 2023, reported the Armenian National Committee of America (ANCA).

The solemn commemoration, co-hosted by the ANCA and the Armenian Assembly of America, in cooperation with the Congressional Armenian Caucus, is the latest in a decades-long tradition of annual Capitol Hill observances dating back to the first such gathering in 1965, which marked the 50th anniversary of the Genocide. This year's program came as Turkey and Azerbaijan's genocidal crimes against the Armenian nation — from 1915 to 2023 — remain unaddressed and ongoing. Armenian prisoners of war and civilian captives, including Artsakh leaders, continue to languish in Azerbaijani detention. More than 150,000 Artsakh Armenians remain forcibly displaced from their homes. And Azerbaijan continues to occupy sovereign Armenian territory while pressing demands designed to foreclose any prospect of justice, accountability, or return.

Text Link

## California Legislators Demand Trump Free Armenian Hostages, End Azerbaijan's Impunity




The Armenian National Committee of America-Western Region (ANCA-WR) today welcomed a bipartisan letter, signed by more than 25 California state legislators, delivered by the California Armenian Legislative Caucus Foundation to President Donald J. Trump — demanding the release of Armenian hostages illegally held by Azerbaijan, the right of return for Artsakh refugees, an end to Azerbaijani occupation of sovereign Armenian territory, and the Trump Administration's recognition of the Armenian Genocide.

"California's legislators have sent President Trump an unambiguous message: Armenian hostages must be freed, Azerbaijan's occupation must end, and Armenia's sovereignty must be secured," stated **Oshin Harootoonian**, Chairman of the ANCA-WR Board of Directors. "This bipartisan letter reflects the moral resolve of California's more than one million Armenian Americans — the largest Armenian-American community in the nation. President Trump must act."

Text Link



## Armenian National Committee of America Endorses Massachusetts Senator Ed Markey for Re-Election

The Armenian National Committee of America (ANCA) today announced its endorsement of U.S. Senator Ed Markey for re-election, citing his decades-long Congressional leadership on issues of special concern to Americans of Armenian heritage across Massachusetts and around the United States.

"Senator Markey has been a consistent and courageous voice for justice," said ANCA activist Steve Mesrobian. "From advancing U.S. recognition of the Armenian Genocide to holding Azerbaijan accountable for its aggression and ethnic cleansing of Artsakh's indigenous Armenian population, Senator Markey has demonstrated a clear and unwavering commitment to truth, accountability, and a true and sustainable peace."

Throughout his tenure, Senator Markey has worked closely with ANCA advocates in Massachusetts to promote policy priorities that strengthen Armenia’s security, restrict U.S. military aid to Azerbaijan, and support the rights and safe return of displaced Armenians from Artsakh. He has also been a vocal advocate for enforcing Section 907 of the FREEDOM Support Act and advancing humanitarian assistance to those impacted by Azerbaijan’s aggression.

Text Link

## Trump Enforces Ankara’s Gag-Rule for Sixth Time on Armenian Genocide Recognition




The Armenian National Committee of America (ANCA) sharply condemns President Donald Trump’s continued retreat from American recognition and remembrance of the Armenian Genocide, as reflected in his refusal — for the sixth time — to acknowledge this crime by name in the **White House’s annual April 24th statement** marking the 111th anniversary of the Ottoman Turkish Government’s systematic annihilation of 1.5 million Armenians.

“President Trump is doubling down on his disgraceful surrender to Turkish threats — continuing, now for the sixth time, enforcing Ankara’s gag-rule against honest American remembrance of this crime — despite recognition by the White House, Congress, all fifty states, and more than a dozen NATO allies,” stated ANCA Executive Director Aram Hamparian.

“President Trump’s complicity in covering up Turkey’s crimes — actively enabling Ankara’s ongoing consolidation of the WWI-era genocide of the Armenian people — is compounded by his Administration’s reckless policies arming and enabling Azerbaijan’s continued attempts to annihilate Armenians from their historic homeland,” Hamparian continued. “In the wake of Azerbaijan’s ethnic cleansing of Artsakh’s indigenous Armenian population — amid its ongoing occupation of Armenian territory, abuse of Armenian prisoners, and destruction of Armenian Christian heritage — the United States has a duty not only to speak the truth about the 1915 Genocide, but to end its complicity in pan-Turkic attempts to complete this genocide.”

Text Link




## Հայ Դատի յանձնախումբը խստօրէն կը դատապարտէ նախագահ Տոնալտ Թրամփի շարունակական նահանջը

Հայ Դատի յանձնախումբը խստօրէն կը դատապարտէ նախագահ Տոնալտ Թրամփի շարունակական նահանջը՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումէն եւ ոգեկոչումէն, որ կը դրսեւորուի անոր վեցերորդ անգամ ըլլալով մերժումով։ 111-րդ տարելիցին։ Սպիտակ Տան տարեկան Ապրիլ 24-ի յայտարարութեան մէջ, ան պարզապէս ոճիր կ՛որակէ օսմանեան թուրք կառավարութեան կողմէ 1.5 միլիոն հայերու համակարգուած ոչնչացումը։
«Նախագահ Թրամփ կրկնապատկած է իր ամօթալի յանձնուիլը թրքական սպառնալիքներուն առջեւ՝ շարունակելով վեցերորդ անգամ, գործադրել Անգարայի հրամանը, այս անպատշաճ յայտարարութիւնը կատարելով, հակառակ Սպիտակ Տան, Քոնկրէսի, բոլոր յիսուն նահանգներու եւ ՆԱԹՕ-ի տասնեակէ աւելի դաշնակիցներու կողմէ կատարուած ճանաչման», յայտնեց Հայ Դատի յանձնախումբի գործադիր տնօրէն Արամ Համբարեան։

Text Link

## House Appropriations Panel Backs ANCA Push for Increased Security Assistance for Armenia, Calls for Congressional TRIPP Oversight in FY27 Foreign Aid Bill




ANCA Welcomes Committee Action Responding to Armenian Caucus Letter; Renews Call to Suspend U.S. Military Aid to Azerbaijan and Secure Accountability for Artsakh's Genocidal Ethnic Cleansing
The U.S. House Appropriations Committee has advanced the Fiscal Year (FY) 2027 National Security, Department of State, and Related Programs (NSRP) Appropriations Bill with report language directing increased security assistance for Armenia and requiring State Department reporting on the proposed Trump Route for International Peace and Prosperity (TRIPP) — a direct response to advocacy led by the Armenian National Committee of America (ANCA) and the Congressional Armenian Caucus.

Text Link

# Հայ դատի Եվրոպայի գրասենյակ



## EAFJD President Kaspar Karampetian Addresses OSCE Conference in Vienna: Raises Alarm over Democratic Erosion in Armenia

Kaspar Karampetian, President of the European Armenian Federation for Justice and Democracy (EAFJD), participated in the **"Lawmaking for Democratic Resilience: Supplementary Human Dimension Meeting I"** held in Vienna on March 16-17, 2026. The conference, organized by the OSCE Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR) under the Swiss OSCE Chairpersonship, brought together over representatives from OSCE participating States, international organizations, and civil society.

**Defending Against Defamatory Rhetoric**

During the plenary session, President Karampetian delivered a firm rebuttal to a government-aligned NGO from Azerbaijan that attempted to weaponize the platform to spread defamatory accusations against the Armenian nation. The NGO claimed that Armenian school textbooks contain hate speech and historical misinformation targeting Azerbaijanis.

Refuting these baseless claims, Karampetian cited an extensive body of evidence from international human rights organizations and the **European Court of Human Rights (ECHR)**. He highlighted that it is, in fact, Azerbaijan and the Aliyev administration that have been consistently condemned for state-sponsored Armenophobia and the weaponization of ethnic hatred. Karampetian pointed to landmark rulings and monitoring reports—including the **International Court of Justice (ICJ)** provisional measures—which order Azerbaijan to prevent the incitement of racial hatred and protect ethnic Armenians from state-led discrimination.

Text Link

## Գասպար Կարապետյանը Վիեննայում մասնակցել է ԵԱՀԿ համաժողովին



ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանը մարտի 16-17-ը Վիեննայում մասնակցել է «Օրենսդրություն՝ հանուն ժողովրդավարական դիմակայունության. Մարդկային չափման լրացուցիչ հանդիպում I» խորագրով համաժողովին։ Այն կազմակերպվել էր ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ODIHR) կողմից՝ ԵԱՀԿ շվեյցարական նախագահության շրջանակում։ Համաժողովը համախմբել էր ԵԱՀԿ մասնակից պետությունների, միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների։

**Պաշտպանություն զրպարտչական հռետորաբանության դեմ**

Լիագումար նիստի ընթացքում Գասպար Կարապետյանը հակադարձել է Ադրբեջանի իշխանամետ մի ՀԿ-ի նորկայացուցչի, ով փորձել էր օգտագործել համաժողովի հարթակը՝ հայ ժողովրդի դեմ զրպարտչական մեղադրանքներ տարածելու համար։ Նշված ՀԿ-ն պնդել էր, թե հայկական դպրոցական դասագրքերը պարունակում են ատելության խոսք և պատմական կեղծիքներ՝ ուղղված ադրբեջանցիների դեմ։

Text Link

## EAFJD Welcomes Belgian Parliament's Adoption of Resolution on Armenia




The European Armenian Federation for Justice and Democracy (EAFJD) welcomes the **unanimous adoption of a comprehensive resolution** by the Belgian Chamber of Representatives yesterday. This vote marks a significant milestone in strengthening **the rapprochement** between Belgium and Armenia, while signaling strong support for Armenia's **continued integration with the European Union.**
The resolution, introduced after unanimously adopted by the Committee on External Relations by MP Michel De Maegd, also calls for **the right of the Armenians of Artsakh** to return to their homeland under the protection of international security guarantees, recognizing that no safe return is possible without a robust international mechanism. It further demands **the immediate withdrawal of Azerbaijani force**s from the sovereign territory of the Republic of Armenia to the positions held on May 12, 2021. Additionally, the resolution focuses on the **fate of the Armenian prisoners of war and civilian hostages** currently held in Baku, including the political leadership of Artsakh, whose continued detention remains a major humanitarian concern.

Text Link

# Բելգիայի Դաշնային խորհրդարանը արցախահայության վերադարձի իրավունքի ապահովման կոչ է արել




Հայ դատի Եվրոպայի գրասենյակը ողջունում է Բելգիայի Ներկայացուցիչների պալատի կողմից ապրիլի 16-ին միաձայնությամբ ընդունված համապարփակ բանաձևը: Այս քվեարկությունը կարևոր հանգրվան է Բելգիայի և Հայաստանի միջև մերձեցման ամրապնդման գործում՝ միաժամանակ աջակցություն արտահայտելով Հայաստանի շարունակական ինտեգրմանը Եվրոպական միությանը:
Պատգամավոր Միշել Դը Մագդի կողմից ներկայացված բանաձևը, որը նախապես միաձայն ընդունվել էր արտաքին հարաբերությունների հանձնաժողովում, ի թիվս այլնի կոչ է անում ապահովել Արցախի ժողովրդի վերադարձի իրավունքի իրացումը՝ միջազգային անվտանգության երաշխիքների առկայությամբ: Ըստ բանաձևի՝ անվտանգ վերադարձը հնարավոր չէ առանց միջազգային գործուն մեխանիզմի: Բանաձևով նաև պահանջվում է Ադրբեջանի զինված ուժերի անհապաղ դուրսբերում Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքից՝ դրանք վերադարձնելով 2021թ. մայիսի 12-ի դրությամբ զբաղեցրած դիրքերին: Բացի այդ, բանաձևը անդրադառնում է Բաքվում ներկայումս պահվող հայ ռազմագերիների և քաղաքացիական պատանդների ճակատագրին, ներառյալ Արցախի քաղաքական ղեկավարությանը, որոնց կալանքը շարունակում է մնալ լուրջ մարդասիրական խնդիր:

Text Link




## ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակը ողջունում է Եվրոպական խորհրդարանի բանաձևը

ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակը ողջունում է Եվրոպական խորհրդարանի բանաձևը, որով պահանջվում է, որ Հայաստանի իշխանությունները երաշխավորեն ընդդիմության իրավունքների լիարժեք հարգումը, դատական անկախությունը և խոսքի ազատությունը, ինչպես նաև պահանջվում է արդարություն արցախահայության և հայ գերիների համար
ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակը ողջունում է ապրիլի 30-ին Եվրոպական խորհրդարանի կողմից ընդունված՝ «Հայաստանում ժողովրդավարական դիմակայունությանը աջակցելու մասին բանաձևը»: Այս նշանակալի փաստաթուղթը ամրապնդում է Եվրոպական միության հանձնառությունը Հայաստանի ինքնիշխան ընտրությանը՝ եվրոպական ինտեգրման ուղղությամբ, և սահմանում է հստակ ակնկալիքներ դատական համակարգի բարեփոխումների և ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման վերաբերյալ:

Text Link

## EAFJD Welcomes European Parliament Resolution demanding the Armenian authorities to guarantee full respect for opposition rights, judicial independence and freedom of expression and Demanding Justice for Artsakh Armenians and the Hostages




The European Armenian Federation for Justice and Democracy (EAFJD) welcomes the adoption today of the “Resolution on supporting democratic resilience in Armenia” by the European Parliament. This landmark document solidifies the European Union’s commitment to Armenia’s sovereign choice for European integration and sets clear expectations for reforms in the judiciary and the strengthening democratic institutions.
The resolution addresses the new phase of EU-Armenia relations, which is marked by expanded security cooperation and a shared commitment to democracy and the rule of law. It serves as a comprehensive roadmap for the EU-Armenia partnership, covering the implementation of the new strategic agenda, the Resilience and Growth Plan, and Armenia’s formal aspiration for EU membership.

Text Link

## Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովին ընդառաջ՝ Եվրոպայի տարբեր երկրներում գործող հայկական համայնքների ներկայացուցիչների հայտարարությունը

Մենք՝ Եվրոպայի տարբեր երկրներում գործող հայկական համայնքների ներքոստորագրյալ ներկայացուցիչներս, հրապարակում ենք այս հայտարարությունը՝ Երևանում կայանալիք Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովին ընդառաջ՝ մտահոգություն հայտնելով 2026 թ. հունիսի 7-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններին նախորդող ժամանակահատվածում Հայաստանի ժողովրդավարական միջավայրի ամբողջականության վերաբերյալ։

Ժողովրդավարությունը պետք է պաշտպանվի ոչ միայն ընտրության օրը, այլև մինչ այդ

Հայաստանը մոտենում է ընտրական վճռորոշ փուլին։ Սակայն առկա պայմանները մտահոգություն են առաջացնում գործընթացի նկատմամբ հանրային վստահության առումով։ Խիստ բևեռացված քաղաքական միջավայրը, քաղաքական մրցակցության անհավասար պայմանները և նախընտրական ընդհանուր շրջանակի վերաբերյալ հարցադրումները կարող են վտանգել վստահությունը։

Text Link

## ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի հայտարարությունը ԵՄ-Հայաստան գագաթնաժողովի վերաբերյալ

ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակը նկատի է ունենում Երևանում անցկացված ԵՄ-Հայաստան առաջին գագաթնաժողովի պատմական նշանակությունը։ Եվրոպական խորհրդի նախագահ Անտոնիու Կոշտայի և Հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լեյենի ներկայությունը ազդարարում է եվրոպական ղեկավարության ողջունելի պատրաստակամությունը՝ անմիջականորեն ներգրավվելու հայ հասարակության հետ։ Հայ դատի Եվրոպայի գրասենյակը, այնուամենայնիվ, շեշտում է, որ դիվանագիտական ներկայությունը այժմ պետք է վերածվի կոնկրետ գործողությունների, որոնք կպաշտպանեն Հայաստանի ինքնիշխանությունն ու նրա ժողովրդի իրավունքները։

Մինչ գագաթնաժողը ՀՀ-ԵՄ հարաբերություններում արձանագրեց «նոր գլուխ», մենք ԵՄ ղեկավարներին հիշեցնում ենք, որ այս հարաբերության հիմքը՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (CEPA), ենթադրում է դատական խստապահանջ բարեփոխումներ, ինստիտուցիոնալ դիմակայունություն և ժողովրդավարական արժեքների ամրապնդում։ Որպեսզի «Հայաստանի ապագան որոշվի ազատ և ժողովրդավար ձևով՝ իր քաղաքացիների կողմից», անհրաժեշտ է իրականացնել համապարփակ փոփոխություններ՝ ապահովելու ընտրական ամբողջականությունը, ընդդիմության իրավունքները, լրատվամիջոցների անկախությունը և ընտրական գործընթացի ընթացքում արտաքին միջամտություններից պաշտպանությունը՝ մի հասկացություն, որը, ցավոք, այս նույն գագաթնաժողովի ընթացքում որոշ եվրոպացի ղեկավարների կողմից չկիրառվեց։

Text Link




## The EAFJD Statement on EU-Armenia Summit

The European Armenian Federation for Justice and Democracy (EAFJD) acknowledges the historic significance of the first-ever EU-Armenia Summit held in Yerevan. The presence of European Council President António Costa and Commission President Ursula von der Leyen signals a welcome willingness by European leadership to engage directly with Armenian society. However, the EAFJD emphasizes that diplomatic presence must now translate into concrete actions that safeguard Armenia’s sovereignty and the rights of its people.

While the summit celebrated a “new chapter,” we remind European leaders that the foundation of this relationship, the Comprehensive and Enhanced Partnership Agreement (CEPA) was built on the condition of rigorous judicial reforms, institutional resilience, and the strengthening of democratic values. In order for “Armenia’s future [to] be determined freely and democratically by its citizens”, comprehensive changes need to be applied to ensure electoral integrity, opposition rights, media independence and protection from ALL foreign interference during the electoral process, a concept that was unfortunately not enforced by some European leaders during this very Summit.

The Joint Declaration highlights three primary avenues of cooperation: Energy, Connectivity, and Digital Infrastructure. While these economic pillars can be vital for long-term growth if applied strategically in tandem with internal reforms, the EAFJD questions how these technical projects will bolster Armenia’s immediate security if they are not paired with a firm stance against regional aggression.

Text Link

# Հայ դատի Որուգվայի հանձնախումբ

## Ուրուկուայի մէջ Հայոց Ցեղասպանութեան 111 ամեակի ոգեկոչման միջոցառում



Չորեքշաբթի 22 Ապրիլին, ինչպէս 25 տարիէ ի վեր կը կատարուի, Ուրուկուայի Խորհրդարանի ձեռնարկներու յատուկ հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 111 ամեակին նուիրուած միջոցառումը, կազմակերպուած Ուրուկուայի Խորհրդարանի Նախագահի եւ Հ.Յ.Դ. Հայ Դատի Յանձնախումբին կողմէ:
Ձեռնարկին ներկայ գտնուեցան նախարարներ, փոխ նախարարներ, պատգամաւորներ, ծերակուտականներ, դիւանագիտական ներկայացուցիչներ, Ուրուկուայի Հայոց Թեմի առաջնորդ Յակոբ Արք. Գլճեան, Ուրուկուայի մէջ ՀՀ Դեսպան Մարիամ Գեւորգեան, Ուրուկուայի մէջ ՀՀ Հիւպատոս Գոհար Մինասեան, ինչպէս նաեւ հայ համայնքի կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ:
Միջոցառման ընթացքին կարդացուեցաւ Ուրուկուայի Փոխ Նախագահ Գարոլինա Գոսսէ-ի ուղերձը:
Ձեռնարկի բացումը կատարեց Ներկայացուցիչներու Պալատի Նախագահ Ռոտրիկօ Կոնյի, որ իր ելոյթի ընթացքին ըսաւ թէ՝ «Այս ոգեկոչման արարողութիւնը միայն 1965 եւ 2004 թուականներու օրէնքներու վերահաստատումը մը չէ, այլ նաեւ այն, որ մեր երկրին դիրքորոշումը կը մնայ հաստատ՝ «Այլեւս երբեք»-ի ձգտումով»:

Text Link

## Հայ դատի Կանադայի հանձնախումբ



## Գանատայի խորհրդարանին մէջ ոգեկոչուեցաւ Հայոց Ցեղասպանութեան 111-րդ տարելիցը

Կազմակերպութեամբ Գանատայի Հայ Դատի յանձնախումբին, երեքշաբթի, 28 ապրիլ 2026-ին, Գանատայի խորհրդարանին մէջ տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 111-րդ տարելիցին նուիրուած հանդիսաւոր ոգեկոչում:
Ձեռնարկը համախմբեց քաղաքական, դիւանագիտական, հոգեւոր եւ համայնքային շրջանակներու ներկայացուցիչներ: Ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Տիկ. Անահիտ Յարութիւնեան, Գանատայի արտաքին գործոց նախարար Անիթա Անանտ, ինքնութեան եւ մշակոյթի նախարար եւ պաշտօնական լեզուներու հարցերու պատասխանատու նախարար Մարք Միլըր, տարբեր կուսակցութիւններու պատգամաւորներ եւ ծերակուտականներ, ինչպէս նաեւ Գանատայի Հայոց Թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեան: Ներկայ էին նաեւ դիւանագիտական մարմիններու, պետական բարձրաստիճան

պաշտօնէութեան, գործընկեր կազմակերպութիւններու եւ գանատահայ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ։

Text Link

## Parliament Hill Commemoration Marks 111th Anniversary of the Armenian Genocide



On Tuesday, April 28, 2026, a solemn commemoration marking the 111th anniversary of the Armenian Genocide was held at the Parliament of Canada, organized by the Armenian National Committee of Canada (ANCC).
The event brought together representatives from political, diplomatic, religious, and community circles. In attendance were Armenia’s Ambassador Extraordinary and Plenipotentiary to Canada, H.E. Anahit Harutyunyan; Canada’s Minister of Foreign Affairs, the Hon. Anita Anand; Minister of Identity and Culture and Minister responsible for Official Languages, the Hon. Marc Miller; Members of Parliament and Senators from various political parties; and His Eminence Archbishop Papken Tcharian, Prelate of the Armenian Prelacy of Canada. Representatives of the diplomatic corps, senior government officials, partner organizations, and Armenian-Canadian organizations were also present.

Text Link

# Հայ դատի Լիբանանի հանձնախումբ

## ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Նամակներ Յղեց Հայոց Ցեղասպանութիւնը Ճանչցած Երկիրներու Դեսպաններուն

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը Հայոց ցեղասպանութեան 111-ամեակին առիթով նամակներ յղեց Հայոց ցեղասպանութիւնը ճանչցած երկիրներու Լիբանանի մէջ հաւատարմագրուած դեսպաններուն։
Հայ դատի մարմինը այդ երկիրներուն Հայոց ցեղասպանութեան ճանաչման համար իր խոր գնահատանքը արտայայտելով նշեց, որ Հայոց ցեղասպանութիւնը ճանչցած պետութիւններուն սկզբունքային դիրքորոշումը անոնց պատմական ճշմարտութեան, մարդկային արժանապատուութեան եւ արդարութեան ու հաշուետուութեան համաշխարհային արժէքներուն նկատմամբ յանձնառութեան արտացոլացումն է։
Լիբանանի Հայ դատի մարմինը նշեց, որ պատմութեան այս մութ էջի ոգեկոչումը կը յիշեցնէ, թէ ճանաչումը իր մէջ յարատեւ պատասխանատուութիւն մը կը պարունակէ՝ աւելցնելով, որ Հայոց ցեղասպանութեան համար արդարութիւնը կը մնայ թերի, իսկ

արդարութեան ժխտումը կը շարունակէ խրախուսել անպատժելիութիւնը:
Հայ դատի մարմինը յայտնեց, որ պատմութեան դասերը պէտք է միջազգային ընտանիքը առաջնորդեն նման վայրագութիւնները կանխարգիլելու, նշելով միաժամանակ, որ սեպտեմբեր 2023-ին Արցախի հայութեան ցեղային զտումը այդ յանձնառութեան տէր կանգնելու ձախողութիւնն է:

Text Link

## ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Եւրոպական Խորհրդարանի Բանաձեւը Ողջունող Նամակ Մը Յղեց Եւրոպական Միութեան Դեսպանին

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը երէկ Լիբանանի մէջ Եւրոպական Միութեան դեսպան Սանտրա Տէ Վալէին յղեց նամակ մը, որուն մէջ ողջունեց Եւրոպական խորհրդարանին կողմէ «Աջակցութիւն Հայաստանի մէջ ժողովրդավարական դիմակայունութեան» բանաձեւի որդեգրումը եւ այդ «կարեւոր» բանաձեւի որդեգրումը նկատեց հայ ժողովուրդի, Եւրոպական Միութեան եւ ընդհանրապէս Եւրոպայի հասարակաց արժէքներու, մասնաւորաբար մարդու իրաւունքներու եւ արդարութեան մէկ արտայայտութիւնը, ինչպէս նաեւ ճիշդ ուղղութեամբ քայլ մը:
Հայ դատի մարմինը յոյս յայտնեց, որ Եւրոպական Միութեան գործադիր մարմինը միութեան օրէնսդիր մարմինին կողմէ տրուած լիազօրութիւնը կ՛օգտագործէ Ազրպէյճանը հաշուետուութեան ենթարկելու սեպտեմբեր 2023-ին Արցախի մէջ անոր գործադրած ցեղասպանութեան եւ ներկայիս մեծ թափով ընթացող մշակութային ցեղասպանութեան համար:

Text Link

Հայ դատի Կեդրոնական խորհուրդ | +374-10-52-19-66 | www.ancnews.info

Armenian Cause Foundation | Mkher Mkrtchyan 12/1 | Yerevan, 0010 AM

Unsubscribe | Update Profile | Our Privacy Policy | Constant Contact Data Notice

Constant Contact

Try email marketing for free today!